ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊԱՀՈՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

1. Լիարժեք ընտանիք:
2. Մանկության և երեխայի բարձրարժեքության, անկրկնելիության, անհատականության և ամբողջականության ընդունումը ծնողների և մերձակա միջավայրի կողմից:
3. Ծնողների և մերձակա միջավայրի կողմից երեխայի իրավունքների ընդունման և դրանց պաշտպանության կարողության առկայություն:
4. Ծնողների և երեխաների փոխադարձ սիրո առկայություն:
5. Երեխաների ֆիզիոլոգիական, հոգեկան, հոգևոր և սոցիալական կարիքների բավարարում :
6. Երեխաների ֆիզիկական և հոգեկան անվտանգության ապահովում:
7. Ընտանիքի ցանկացած անդամի նկատմամբ բռնության բացառում:
8. Տարբեր իրավիճակներում երեխայի կյանքին վերաբերող հարցերի լուծման ժամանակ նրա մասնակցության, ընտրություն կատարելու հնարավորության ապահովում և կարծիքի հաշվառում:
9. Ծնողների կողմից երեխային ճանաչելու, նրա կարիքները բացահայտելու և բավարարմանը աջակցելու շարունակական գործընթացի առկայություն:
10. Դաստիարակչական միասնական միջավայրի առկայություն:
11. Երեխաների և ծնողների միջև հաստատված հումանիստական հարաբերությունների, շփման և հաղորդակցման ձևերի բազմազանություն:
12. Ընտանեկան միասնական պարտականությունների, համատեղ հանգստի, աշխատանքի,ազատ ժամանակի անցկացման ավանդույթի առկայություն:
13. Ընտանիքի անդամների կողմից երեխայի նկատմամբ ուշադրության և հարգանքի առկայություն:
14. Ընտանիքի բոլոր Երեխաների ինքնադրսևորման և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների և հնարավորությունների առկայություն:
15. Ընտանիքի նյութական և սոցիալական բարեկեցության մակարդակը :

16. Ընտանիքում փոխվստահության և փոխհամագործակցության մթնոլորտի առկայություն :
17. Ծնողների կողմից ընտանեկան դերերի և գործառույթների հստակ բաշխվածություն և կատարում:
18. Ընտանիքի նվիրվածությունը առողջ ապրելակերպի սկզբունքներին և պահանջներին:
19. Երեխաների և ծնողների փոխըմբռնման մակարդակը ,ընտանիքի բաց լինելը երեխայի ընկերական միջավայրի համար,
20. Ընտանեկան կյանքի և միջավայրի նկատմամբ վերաբերմունքի, գաղափարների,գնահատականների,արժեքների,ավանդույթների, սովորությունների,բարքերի, մարդասիրական բնույթը:,
21. Ծնողների կողմից երեխայի ազատ գործունեության մշտական վերահսկում:
22. Ծնողների կողմից ընտանեկան դաստիարակության ձևերի ինքնավերլուծության և ինքնախտորոշման կարողության առկայություն:
23. Ընտանիք- դպրոց համագործակցության առկայություն: